12. ՃՆՃՂՈՒԿ ԱԽՋԻԿ

Կէղնի, չէղնի մի մարթում, կնիկում կէղնի։ Էդ մարթ օխտ տարի կանցնի, զավակ չունի։ Օխտ տարու հետ կնիկ կելլա մի հավկիթ կփաթե շորով, կդնե իրեն փորին վրա։ Իրեն մարթուն կհայտնե, որ՝ «ես տղի հիվանդութին ունիմ»։

Մարթն կուրախանա, կասե.— Մենք աշխարհի մեջ զավակ, ժառանգ կունենանք։

Շատ երկար չհասավ, ին ամիս թըմավ. կինը իբրև պառկավ՝ զավակ մը ծնավ։

Սախ մե տարի մը կնիկն էտ հավկիթ տրեց օրոցքի մեջ, օրորեց։

Մարթն ավուր մեկ նստած էր տուն։ Կնիկ մարթուն ըսավ.— Զօր ու գիշեր ըս էրեխի թելն իմ ձեռքս է, կօրորիմ, տու հեշ խիղճ չունի՞ս օր ըսիս՝ տուր թել իմ ձեռքս, ես օրորիմ, օր ես իմ գործիս աշիմ։

Մարթն իսկուն առավ թելը կնկա ձեռքեն, օրորեց իրեն էրեխան։ Կնիկ երփ գնաց ամրոցք՝ ցան բերելու, մարթ ըսավ. «Սախ տարի մը աս էրեխան ծնվիր է, ես հեշ էտ էրեխի ձեն չեմ իմացեր ի»։ Մարթ էլավ, օրոցքը քանդեց, թափ տվեց օրոցի շորեր, ինք իրեն մտքով ըսավ. «Էրեխա չըկա, էտ ի՞նչ պատճառ է»։ Հանկարծակի հավկիթըմ ընկավ գետին, կոտրավ։ Հավկիթ կոտրելեն հետո մե ճնճղուկըմ թըռավ։ Ճնճղուկը թռավ, գնաց մոր առաջ.— Մամ,— ըսավ,— պապս զարկեց գլուխս կոտրեց։

Ախչկա մամն հերսոտելով առավ իրեն ճնճղուկն, էկավ տուն։ Իրեն մարթու հետ բարկացավ ու հերսոտավ. «Քեզի ի՞նչ գործ կար, որ տղան քանդեցիր ու զարթեցրցիր»։

Շատ ի երկար ժամանակ չանցավ, մի օրըմ գեղացու աիչիկներ էլան գացին բանջար, ճնճղուկն էլ հետնիր գնաց բանջար։ Բանջարից վերադարձան տուն, էկան մեկ գետի մը առաջ, նստան լողցան։ Ճնճղուկն էլ իրեն շորեր հանեց, հարիր իսուն քայլի վըրեն զատացավ լողացավ։

Թաքավորի տղեն պատուհանեն մտիկ կէներ էտոր։ Նայեց մե հրեշտակի պես աիչիկ մի, էլավ ճնճղուկի շորեր հագավ գնաց։ Թագավորի տղեն հետ իրեն ուխտ ու պայման էրեց, օր «Այս աիչիկն օր թե մեռնի՝ հողերուն է, մընա՝ իմ նշանածս է»։

Աիչիկներն բոլոր անցան ջուր, ճնճղուկ որին աղաչեց, ոչ մե մարթ չըրռնեց ձեռք։ Ջարահատ շալկեց ուր բեռը ու թրռավ շուրն ընցավ։ Աիչիկներ խաբար տըվեցին ճնճղուկի մորն։ Մեր էկավ իր ճնճղուկի շալակ-բանշար շալկեց, էկավ տուն։

Մեկ ավուր մեկ թաքավորի տղեն նամակըմ գրեց, խրկեց թաքավորի պալատ. թե «Ես կուզիմ ամուսանանալ մեր գեղի նախրորթի ճնճղուկի հետ»։ Բոլոր ժողովուրթ պախարակեցին թաքավորի տղեն։ Թաքավորի տղեն ըսավ. «Եթե օր ճնճղուկը չըլլա իմ կնիկ, ես պիտի ինքնասպան էղնիմ»։

Ժողովուրթն ըսեցին. «Դու թաքավորըմ էղնիս մեզի, տղատի ելնա նախրորթի ճնճղուկն ուզի, կարելի՞ յա, չի կարելի։ Բերիք շուտով համոզիք՝ կամ վազիրին աիչիկ առնե, կամ սադրազամին աիչիկ առնե»։

Եփ կանչեցին թաքավորի տղին, պերեցին, ըսին.—Առ դու վազիրին աիչիկ, կամ սադրազամին։

Թաքավորի լաճ իրեն պզտկութնեն մինչև մեծ ժամանակը չըկարցավ խոսեր թաքավորին առաջ։ Բայց էդ խոսքեն հետ, օր ըսեցին. «Սադրազամին աիչիկն առ», թաքավորին առաջ ելավ, ուղղակի կայնավ, կատղած կերպով, քաշեց սուր ու ըսավ.— Կամ նախրորթի ճնճղուկը պիտի էղնի, կամ ես ինքնասպան կէղնիմ։

Բոլոր ժողովուրթ իրեն հույս տրեր էր, օր պիտի համոզե, եփ օր տղան իրեն սուր քաշեց, թաքավորին առաջ կատաղի կերպով իրեն պիտի զարկեր ըսպաներ, բոլոր ժողովուրթ ապուշ դարձան։

Թաքավոր ինք շատ խնթրեց իր տղից, ըսավ.— Եփ օր դու քու սըրտով կուզիս նախրորթի ճնճղուկն, ես պիտի բերիմ քեզի։

Եփ թաքավորի տղան էլավ պալատից գընաց տուն, թաքավոր որոշեց ժողովուրթից մեկ, ուղարկեց նախրորթի տուն։ Մարթ ըսավ նախրորթին.— Գիտե՞ս,— ըսավ,— թաքավոր քու ճնճղուկ իր տղային կուզե։

Նախրորթ զարմացավ, ըսավ.— Չի կարելի թաքավոր իմ ճնճղուկը ուզե ուրին տղային։

Էդ մարթ ըսավ նախրորթին.— Անկեղծ կըսիմ, պիտի ուզե տանելու։

Նախրորթ ըսավ.— Սիրով կընթունիմ, ինչու՞ չէ։

Մարթ ըսավ.— Տասնըհինգ օրեն վերջ կիգանք տանինք մեր հարսը։

Տասնըհինգ օր լրմըցավ։ Թաքավորն պատրաստութեն տեսավ էկավ հարս տանելու։ Թաքավորի տղան մի էրկան բոյով ախչիկըմ չափն առիր է, ճնճղուկի համար ըդ չափով ջոր կիտա կարիլ։

Գացին եփ ճնճղուկին բերելու, ժողովուրթ խնդացին, ճնճղուկին տրին առաջին անգամ ձիու զանգվի մեջ, վերջ տրին ձիու թարքին վրա ու առին բերին իկան տուն։

Թաքավորի տղան ըսավ.— Բերեցի՞ք իմ նշանածս։

Պատասխանեցին.— Այո, բերեցինք։

Մե յոթն օր հարսնիք էրեցին էտ տեղ, հարսնիք վերչացավ։ Ժողովուրթն էնքան կպախարակին տղին և թաքավորին։

Ավուր մեկըն թաքավորի տղեն ըսավ. «Բերեք ջուր տրեք, բաղնիք տաքցեք, օր նշանածս լոգկնա»։ Եփ նշանածը լոգկըցավ, տղան վազեց էտոր ճնճղուկի փոսթը վերուց վրայեն։ Նշանածը պատասխանեց տղային. «Քու հայրդ ի, իմ խաթրի համար զեհիր կիտա քեզի, կթունավորե, փոսթս մի վառեր, թող հագնիմ»։

Տղան չլսեց անոր, փոսթը վերցուց, տարավ տրավ վառարանի մեջ, վառավ։

Թաքավորին լուր գնաց, թե.—Քո հարստ ի ճընճուղ չէ, մարթ է։

Թաքավոր նորեն ըսկսեց յոթն օր ուրախութեն էրեց։

Յոթն օրեն հետո թաքավորն գնաց տեսութեն իրեն հարսին։

Թաքավոր ի եփ հարս տեսավ, հարսի գեղեցկության իրեք անգամ իրեն ուշքը վերցվավ։ Եփ խելքն ի էկավ գլոխ, շնավորեց իրեն տղի նշանած, բայց չար մտքով։

Էկավ իսկույն իրեն տունն, հրամայեց իրեն թաքուհիին՝ «Մեք այսօր մեր տղան հրավեր պիտի կանչիք հոս»։ Բերեց կարգին սեղան պատրաստեց, օր պիտի տղան կանչեր հրավեր։ Մի մաս մ'ալ ժողովուրթ կանչեց։ Էնպես հրաման էրից, օր, չըլլա մեկմեկի պնակի մեջ ձեռք տնե, մի պատառ կերակուր վերցնե։

Կանչեց իրեն տղան ժողովուրթի մեջ։ Տղայի նշանածն խնթրեց, օր՝ պիտի չէրթաս։ Չկարողացավ կանկըցըներ տղային, ըսավ.

— Անկարելի գործ է, թե օր էրթաս, հայրտ քեզի կթունավորցու իմ գեղեցկությանս համար։

Տղան մտիկ չըրեց, էլավ պիտի էրթար։

Նշանածն ըսավ.— Եփ օր պիտի էրթաս, դու հորդ ի դեմ կնստիս կերակուր ուտիս, էն ժամանակ ես կէղնիմ երեք հատ եղվընիկ, կիգամ սենյակի մեջ կօլորտիմ, մեկս մեկին կզարկիք։ Ամբողջ ժողովուրթ մեզի

սեյր կէնին, բայց դու սեյր մ՝ էնիր։ Դու քու բաժին կերակուլ տիր քու հորտ ի դեմ, հորտ բաժին տիր քու դեմ։ Մենք կթողենք կիգանք, դուք ծեր հաց կուտեք։

Տղան էլավ գնաց, նստան հացի։ Երեք հատ եղվրնեկ էկան մրտան հ՝օդի մեջ, օլրրտան, բաշլեցին մեկ մեկու ծեծեցին։ Բոլոր ժողովուրթ սեյր էրեց եղվրնեկներ։

Թաքավորին տղան գողտուկ իրեն բաժին կերակուլ վերուց իր առջևեն, տրեց թագավորի առաջ, թագավորի կերակուլ տրեց իրեն առաջ։

Եղվրնիկներ թռան գացին։

Բոլոր ըսկսեցին կերակուլ ուտիլ։

Թաքավոր լավ կնայեր տղային երեսն ի։ Ուր մտքի մեջ կըսեր. «Էտ ի՞նչ պատճառ է, որ թունավոր կերակուլ կերավ, չի մահացավ»։

Թաքավորն ըսկսեց իրեն կերակուլն ուտել։ Առաջի պրդուճ ուտելեն, էրկուս կերավ, երրորդ պրդուճին թաքավոր փիցավ։

Ժողովուրթ զարմացավ, ամեն մարթ ուր տեխուն սառան, իրենց կասկածին։ Տղան կանգնավ, ժողովուրթին ըսավ.— Ըս զեհիր իմ պապս ընծի համար էր պատրաստե, ամմա ըն իրեք հատ եղվրնիկ իմ կինս էր, էկան հոդա կըռվան, դուք էնդոնց իշեցիք, ես իմ բաժինս տրի հորս դեմ, հորս բաժին ես կերա։ Հայրս կուզեր զիս զեհիր տալ, օր նշանածս առներ իրեն համար։

Տղան նստավ պապու տեխ, էղավ թաքավոր, իրենք իրենց մուրադ առան, մենք լե հասանք մեր մուրադին։